ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 07 » սեպտեմբեր 2026թ. No 5135 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման գնահատման N 01/4644-26 առ 01.09.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ընդունել 2 դեղի հետգրանցումային փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավասատագրերի տրամադրումը հայտատուներին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի սեպտեմբերի «07 » - ի N 5135- Ա հրամանի

# ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆՆ

| ՀՀ | Փոփոխության տեսակ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | IA | Նալզեզին | նապրօքսեն (նապրօքսեն նատրիում) | դեղահատեր թաղանթապատ | 220մգ (10/1x10/) բլիստերում, (30/3x10/), բլիստերում | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո | Սլովենիա | ԱԴ | 23400/1/1 31.08.2026 |
| 2 | IA | Կուլտուրալ խտացված մաքրված ինակտիվացված չոր պատվաստանյութ կատաղության դեմ | կատաղության վիրուսի “Վնուկովո-32” շտամի սպեցիֆիկ անտիգեն | լիոֆիլիզատ և լուծիչ մ/մ ներարկման լուծույթի | 2.5ՄՄ/մլ; (5) սմպուլներ 1մլ (1 դեղաչափ) և (5) ամպուլներ լուծչով 1.1մլ | Պոլիոմիելիտի Ինստիտուտ, ք. Մոսկվա, ներքաղաքային տարածք՝ Ֆիլիմոնկովսկի մունիցիպալ օկրուգ, Պոլիոմիելիտի ինստիտուտի ավան, շենք 8, կառույց 23՝ բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Պոլիոմիելիտի Ինստիտուտ, ք. Մոսկվա, ներքաղաքային տարածք՝ Ֆիլիմոնկովսկի մունիցիպալ օկրուգ, Պոլիոմիելիտի ինստիտուտի ավան, շենք 8, կառույց 23Ա, Ռուսաստան- երկրորդային փաթեթեավորող | Ռուսաստան | Պոլիոմիելիտի Ինստիտուտ, 117218 Մոսկվա, Դաշնային քաղաքային շրջանի ներքաղաքային տարածք (ներհամայնքային տարածք) Կոտլովկա, Կոժիժանովսկոյի փ. 29, շենք 5, հարկ 3, տարածք I, սենյակ N 6 | Ռուսաստան | Դ | 19597/3/2 31.08.2026 |